

ՊՈԼԿԱՐԻԱ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 ֆր.
Վեցամսեայ 4 ֆր.

ՍՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 10 ֆր.
Վեցամսեայ 5 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԽԻԿ

ԻՄԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՂ.



ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԷ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

rev. Père G. Kalemkérian Michitaris
tengasce № 4
Vienne

ՀԱՍՑԷ

Rédaction du Journal

«Iraounk»

Varna

Редакция На

Вестникъ

«Нравуникъ»

Варна

Գրութիւնք եւ չիւս
տրութիւնք

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ և Ռուսանիոյ մէկ քանի քաղաքները ճամբորդելու առթիւ ստիպուած ենք իրօք Ունիւր երկու շաբաթի չափ չը հրատարակելու իայց այս առթիւ մեր յարգոյ ըստանդներուն օգտակար փոխարինութիւն մը ընելու բաղձանքով ուշուծ ենք այդ վագանձի միջոցին մեր տը պարանի մէջ տպագրել Պոլիարաց Պատմութիւնը՝ անոնց ծագումէն մինչև այս օրերը։ մեր վերագարձին այդ նոր գրքովը ձրի կը շրկենք մեր պարտաճանող բաժանորդներուն, որոնք, վստահ ենք, թէ շատ գոհ պիտի մնան մեր այդ նուէրէն և պիտի օգտուին անկէ։ Սա ևս աւելցնենք թէ ինչպէս այդ գիրքը նոյնպէս ալ «Իրաւունք» ի յաջորդ թիւը նոր տառերով պիտի հրատարակուին։

ՈՒՇԸ ԿՍՉՄԱԿԵՐՊՈՒԹԱՆ ՄԷՋԷ

Ժամանակէ մը ի վեր, մանաւանդ սա եկեղեցիներու մէջ միթիւններ գումարելու խնդրոյն ծագումէն ի վեր, հայ ազգին մէջ լսուած դրութիւն մը ստեղծուեցաւ։ Մայրաքաղաքը և Յաւաջգի մականներ գէժ դիմաց կանգնած են այսօր առաւել քան երբեք գերագրգիւ վիճակի մը մէջ։

Յայտնի է թէ Մայրաքաղաք խրաւկցութիւնը կը կաղմն անոնք որոնք ասկէ մինչև երկու տարի առաջ թուրք բռնակալութեան գէժ գոյութիւն առած Յեղափոխ մարմիններէն, իսկ այսօր թուրքերէն, կամ օսմանցիութեան պաշտպան կը յայտարարեն ինքզինքնին, իրենց պայքարը ուղղելով միմիայն հայ ժողովուրդի քաւաւոր նուիրակներէն և ոչ կուսակցական ուժերու գէժ։ Անոնցմէ կը հալածուին այժմ կաթողիկոսէն սկսեալ մինչև յետին գիւղական վարժապետը ու ժամակալը, խմբագրէն կա՛մ հրապարակագրէն սկսեալ մինչև յետին մտաւորականը, որոնք համարձա-

կութիւն ունեցած են իրենց անկախ կարծիքը յայտնելու։ Ազգին աննշան փոքրամասնութեան ներկայացուցիչը ըլլալ հաւակնող այդ ծայրայեղներու խմբակցութեան վարիչները ամէն միջոց ներքին համարած են իրենց կազմակերպութեանց գոյութիւնը պահելու և հոն իրենց աթոռները չը կորսնցնելու համար։

Ասորիւ կայ ազգին մտաւորական զործիչներու վաղածանօթ երախտաւորներու, ազգային բարեարներու, ներհուն հրապարակագիրներու, արուեստից ու գիտութեան ներկայացուցիչներու և հայ ժողովրդեան լրջախոհ ու բանիմաց դասուն ստուարութիւն յաւաքիմասէր զանգուածը որ կուգէ ազգին յաւաքիմութեան ղեկը այլևս չը թողուլ որ ծայրայեղները իրենց քմահաճոյքին համաձայն վարեն, չը թողուլ որ հին դարերէ ի վեր մինչև այսօր հայ ազգին գոյութեան ապաւենը եղող եկեղեցին քանդուի իր բարոյական հիմքերէն, չը թողուլ որ հայ ընտանիքը կազմալուծուի այդ «Ազատ սիրոյ» ապստեաններու տեսական ու գործնական բոքաւանտով, չը թողուլ որ մանկութիւնը ապականուի այն «նոր սերնդական» թունաւորումով զոր այդ հերոսները վանէն մինչև Պոլսոյ Ս. Յակոբայ որբանոցը և անկէ մինչև Մշտնեքոսեան վարժարանը ներարկեցին, չը թողուլ որ խելառ և անհերատես քաղաքական շարժումներով անգամ մըն ալ վտանգուի հայ ազգի այսօրուան փափակ դրութիւնը ու չը թողուլ վերջապէս որ այն ծայրայեղներու օտարներէ կապկած և մեր երկրին բնաւ չի յարմարող ընկերվարական բոքաւանտով դասակարգային շերտաւորումներ, բաժանումներ ու պառակտումներ ծայր տան հայ ազգին արդէն տկար միութեանը մէջ։

Այդ Յաւաջգիմասէրներու անկազմակերպ զանգուածը թէ՛ հայ ժողովուրդին զարգացմանը սառարեւու և թէ՛ այն ծայրայեղ-

ներու խրաւկցութեան խոլական և մերթ բարբարոսական արշաւանքին գէժ յաջողագէտ մաքաւելու համար բանի մը միայն կը կարօտի այսօր այն է կազմակերպութիւնը։ Հաստատուած և ընդունուած ճշարտութիւն մըն է թէ կազմակերպելու տասը աւելի մեծ ուժ կը ներկայացնէ քան անկազմակերպ հարիւրը։

Բարեբաղդաբար կազմակերպուելու անհրաժեշտութիւնը ըզգացուած է այսօր յաւաքիմասէրներու կողմէ։ Հայաստանի խորքէն սկսեալ Պոլսէն, Եգիպտոսէն և Ամերիկայէն ձայներ կը լսուին «կազմակերպութիւն» ազգակողմից աղափարը բաւական մշակուած է։ Խնդիր է թէ նախաձեռնութիւնը ո՞վ պիտի ստանձնէ։ Այդ խնդիրն ալ մեզ լուծման մօտ կէտէն և կառավարկենք որ նախաձեռնութիւնը, ստանձնեն Հայ Սահմ. Ռաւկալ. կուսակցութեան և Ամերիկայի «Հայ յաւաքիմասէր կան ընկերութեան» կեդրոնական վարչութիւնները, որոնք ազգային քաղաքական նպատակաւ կազմակերպուած մարմիններ ըլլալով, անով իրենց բուն կոչումին ծառայած պիտի ըլլան։ և ընդ իրոյթ պէտք է իրենց լիազօրները Պոլիս շրկեն, տեղոյն յառաջդիմասէր մէկ քանի ծանօթ գէժ գերու հետ խորհրդակցելով հիմքերելու համար այն բազմալի կազմակերպութեան, որով միայն կարելի պիտի ըլլայ ծայրայեղներու արշաւանքներէն փրկել հայ վարժարանը, հայ եկեղեցին, հայ ընտանիքը և ազգային միութիւնը, և պաշտպան ու զօրավիգ կանգնել ազգին զարգացման և անոր գոյութեան պահպանման նուիրած հաստատութիւններուն ինչպէս Ազգ. Պատրիարքարանին կաթողիկոսութեանց, Միացեալ և Դպրոցասէր Տիկնանց ընկերութեանց, Հ. Բ. Ը. Միութեան և այլ ազգային և բօրեգործական հաստատութեանց ուրեք կը հալածուին ծայրայեղներէ։

Ուժը կազմակերպութեան մէջէ։

Յ. Գրութիւնք

ԱԶԳԱՅԻՆ

Պոլսոյ Ազգ. Երեսփոխանական Ժողովը իր անցեալ ուրբաթին խորհրդի մէջ յետ երկար վիճաբանութեանց շնչած է նախընթաց նիստի այն որոշումը զոր խոմանական սպառնալիքի տակ ակամայ տուած էր եկեղեցիներու մէջ միթիւնի գումարելու մասին։ Նախ վեհ. կաթողիկոսի ծանօթ կոնդակին հիման վրայ մերժած է եկեղեցիներու մէջ միթիւնի գումարելու առաջարկը։ Նոյն Ժողովին Ա. ատենապետ ընտրուած է Կարբիէլ Էֆ. Նորատուկեան։ Այս առթիւն կատարեցած է կուսակցականները ուրեք իրենց թերթերով սկսած են փողոցային լեզու մը գործածել նոյն իսկ կաթողիկոսին գէժ բայց իրենց այս ընթացքով ալ աւելի վարկաբեկ կըլլան ժողովուրդին աչքին։

—Նսիկին Պատրիարք Օրմանեանի քննիչ յանձնաժողովը ծանր պատասխանատուութեան և դատապարտութեան պարագայ չէ տեսնել իր տեղեկագիրը Ազգ. Ժողովին պիտի ներկայացնէ։

—Մշակ կը գրէ։ «Չատկական տոներուն հետ սկսաւ սպանութիւններու աւաղակութիւններու սեզօնը։ Սպանեցին Մանթաշեանի Ուսպէնիկի նախնաճառքի գործակաւորներէն մին, Սմբատ Առաքելեանը, և Միրզոյէվի հայ ծառաներէն մին և թուրք մը ինչդեցին։ Կը տեսնէ՞ք կովկասի բոլորէնաբարտը, միշտ յառաջդէմ է թուրքիացիներէն։ և անոնք են որ իրենց պէս ընել կուզեն թրքահայութիւնն ալ Սոսիսիստի հանգամանքով։

—Յաւաջգիմայ Բունիս 20ին եպիսկոպոսական ձեռնադրութիւն պիտի կատարուի Էջմիածնի մէջ, պիտի փութան այդօրը հոն գրտնուի եպիսկոպոսական համար Երուսաղէմայ Տեղապահը, Կարնոյ Տեղապահներու, Գաղատիոյ Առաջնորդները և Կողոց անապատի վանահայրը։

—Անտիոքի մէջ ջարդուող հա-

(Ծանօթ 4րդ կէլիմէ)

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՅՍՅԻ ԺԱՌԸ

Նախընթաց կիրակի Դահլիճի մէջ գումարուեցաւ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան ընդհանուր ժողովը։ Այդ առթիւ նոյն օրը տեղի ունեցաւ խիստ շքեղ հանդէս մը Ազգ. Վարժարանին մէջ. ուր համախմբուած էին հայ փաշան ու ծառան, հայ գործաւորը ու գրագէտը։ Նախ Գօղթոս փաշա նուպար երկու խօսքով բացատրեց թէ ինք շատ վարժ չլլալով հայերէն բանաստեղծութիւն, իր Քրանսերէն գրած բանաստեղծութեան թարգմանութիւնը պիտի կարդայ Տ. Անէմեան։ Ահա այդ ճառը.

«Հայկական Ընդհանուր Միութիւնը մեր յուսացածն աւելի լաւ պայմաններու մէջ չ'ըլլող տարին բոլորած ըլլալով, իր Վարչական Ժողովը մը-տածեց թէ՛ դուք որ հաւատարմութեամբ աւտը՝ եւ իւրաքանչիւր իր միջոց-նելով անոր բարգաւաճումին օժանդակեցիք. աւելի շտ պիտի փափաքէք ծանօթանալ մեր ընկերութեան յառաջ-դիմութեան՝ իր ներկայ վիճակին հաս-կիմք մէջ ամփոփուածով։

Երբ 1906 Ապրիլին քանի մը բա-րեկամներու հետ յղացանք Միութիւնը հիմնելու գաղափարը, պէտքի մը կը պատահանէր ան հին ընկերութիւն օրով. Հայ. երեքը մնացած մեր ազգա-կիցներուն տառապանքները եւ կա-րօտութիւնները՝ իրենց վերջին սահ-մաններուն հասած էին. ահա մտնէր պէտք ունէին նաեւ դուրսի օգնու-թիւններուն։ Ամենքս ալ կ'օգնէինք նպաստներ յիշել անոնց. բայց չէինք գիտեր որո՞ւ յանձնել՝ որ անոնց հաս-ցընէ այդ նպատակները։ Գիտէիք որ մեր հարեակիցները աւելի փութկոտ եւ աւելի առատաձեռն պիտի գտնուէին՝ եթէ կ'օրհիւ ըլլար ապահովեցնել անոնք՝ նպաստ եւ ուն գօղթոսութեան մասին՝ եւ վարժութեան տալ անոնց՝ թէ ապագային իրենց ընկերք զոհողու-թիւնները միմայն թշուառութիւնները ամօքելու պիտի ծառայէին։ Այս մը-տածումէն ծնաւ մեր Միութիւնը։ Բայց անմիջապէս գաղափարը ընդ-լայնեցաւ, եւ մեր առաջին կոչին վրայ՝ այնքան բազմաթիւ աշակցու-թիւններ արթնագրեցան, որ օրօշե-ցինք ընդարձակել մեր ապագայ Ըն-կերութեան առաջադրութիւնները. հետեւեալք եւ գօղթ. ընկերութեան առ-պարկը։

Գօղթագրին սույն յօդուածը, զոր կ'ազնու յիշատակել հոս, օրօշեցաւ յատկօրէն կը բնորոշէ այդ առաջա-դրութիւնները՝ ինչպէս եւ ընդգրկե-ած նպատակը. կը նախատեսէ որ՝ Միութիւնը պարտի ընկալուելու մասին ու սարքայական զարգացման աշխատիլ «անոր շէնքակաւ եւ բարոյական կացութիւնը բարեօքելու, եւ քաղա-լիքիւ այս արդիւնյը յառաջ բերելու» ծառայող ունէ՛ ձեռնարկ կամ հրատա-րակութիւն։

Կանոնադրեր նոյն հետեւի կաւել-ցընէ նաեւ թէ Ընկերութիւնը հապէս մարդասիրական է՝ ունէ քաղաքական հաճամանք չունի եւ թէ այս պայմ-անը հիմնական է։

Այսպիսի ձեռնարկ մը, ներշնչած Այրանս Իգրաւիդի օրինակէն, օրօշ-յաջողութիւնը եւ հրաշալի շնորհա-կումը գիտէր, այն ատեն միայն կրնայ յաջողիլ երբ կարեւոր հասոյթներ բարձրագոյն. եւ ամբողջ համար պէտք

էր նախ եւ առաջ վստահութիւն ներ-շնչել՝ համոզելու եւ առիթներու հա-մար մած թիւով ահա մնալ. Բնական-նաբար սկզբնաւորութեան մէջ համեմատ հասոյթներ միայն կրնայինք տրամա-դրել. բայց մենք կը յուսայինք որ հասարակութիւնը, անգամ մը որ ա-պահով ըլլար՝ թէ ծրագրուած նպա-տակը խղճմտօքն գործադրուած է, ա-մէն ծախքերուն եւ մեր բաշխած նը-պաստներուն հրատարակութիւնովը, անիկա ահա ատեն պիտի շնորհէր մե-զի իր վստահութիւնը՝ եւ պիտի գար գէպի մեզ։

Այս վստահութիւնը ներշնչելու հա-մար, մեր սկզբունքը եղած է եւ միշտ պիտի ըլլայ՝ լուս աշխարհով աշխա-տիլ. Միութեան տունը ապակիէ տուն մըն է, ուր ոչինչ պէտք է որ ծածուկ մնայ. — չ վարչական գործերուն թէսակետով, եւ ոչ ալ գոր-ծադրուած նպատակին՝ որ պէտք է միշտ մնայ այնպէս ինչպէս որ չապէս նախագիծած է մեր Կանոնադրիւրը, ա-ռանց անկէ հեռանալու։ Ծորքան Մի-ութիւնը հաստատութիւն մնայ այս ըս-կեղծութիւնը եւ իր նպատակին, ահի-կա պիտի յառաջդիմէ եւ զօրաւոր պի-տի ըլլայ։

Այդ վստահութիւնը, որ մեզի ան-հրաժեշտ էր յաջողելու համար միշտե-ցարդ բախտը ունեցանք շնորհելու. առոր ապացոյցը պիտի գտնեք սա իրողութեան մէջ՝ որ իր գոյութեան հազիւ չորս տարիներուն մէջ՝ մեր Միութիւնը կրգաւ 15,000 եզրպտ. Ոսկիի չափ բազմազան նպաստներ բաշխել եւ թէ՛ այսօր ունի 10,000 եզրպտ. Ոսկիէ աւելի անձնութիւնի գրանցուելու մը, առանց հաշուելու կտակները եւ նուիրատուութիւնները որ օրը յարկաւոր մը համար եղած են՝ եւ օր կը կազմեն զրամագումար մը 4,800 եզրպտ. Ոսկիի։

Այս մասին կարճ բացատրութիւն մը պէտք է, զոր օգտակար կը սեպեմ ձեզի առջ։

Վարչական մը առաջ ըսի որ, իր նպատակին հասնելու համար եւ իր-մէ սպասուած ծառայութիւնները կա-րենալ մասնաւորապէս համար, պէտք է Միութիւնը հարուստ ըլլայ. Բարե-գործակցութեան մարդասիրական ընկե-րութեան մը համար ասիկա բնական-նաբար ապացոյցումը կարօտ չէ, բայց ճիշտ այն պատճառաւ որ խն-դիրը Բարեգործական Ընկերութեան մը մասին է խոթ մը կար, կը վախ-ցուէր օր, ամէն կողմիւր ինչորայնք. եր հասնելով եւ ինք ալ անապարկով իր բոլոր հասոյթները նպատակներու գոր-ծածել, իր անուշիկ պիտի պարպուէր չարունակ՝ ինչ չափով որ եկամուտ-ները հոն չտեսային, այնպէս որ Մի-ութիւնը պիտի ստիպուէր օրը օրին ապրիլու՝ առանց կարենալու երբեք գրանցուելու մը տրեւալ։

Ասոր առջեւ անհելու, եւ իրեն թոյլ չաւելու համար կազմել զրամագումար մը կանոնադրին մէջ էական պայման մը գրել. որ, չիմ վարձիւրը ըսելու, մեր արդի բարեյաջող վիճակին պատ-ճառներէն մին եղաւ. այդ արամագում-րեան համաձայն, այն նուէրները եւ կաւելները որ Միութեան եղած են ա-ռանց որչա՛ նպատակի մը եւ մասնաւոր յատկացումի, նոյնպէս Միութեան ան-գամնեալ մուտքի տուրքերը եւ իրենց ամսավճարներուն 1/8ը՝ պարտին զը

րամագումարի հաշուին անցնել՝ եւ պետական եւ առաջնակարգ արժեթուղ-թներու եւ կամ՝ քաղաքի հասոյթա-րէր կալուած՝ երու վերածուիլ։ Այս գումարները, առաջին չորս տարիներու միջոցին, հասած են ինչ-պէս որ ըսի, 10,000) եզ. Ոսկի դու-մարի մը. որ կը կազմէ հիմնական անձեռ՝ միւսի զրամագումարը եւ որուն հասոյթները միայն կրնան ամէն տարի գօղթածուիլ նպատակներու եւ ծախքե-րուն։

Բայց հիմնական զրամագումարէն զատ Միութիւնը ընդունած է զանա-զան նուիրատուութիւններ՝ կանխարդ-նպատակներու համար, որոնց մէջէն պիտի յիշեմ նորագոյնը՝ 25 000 Քր. Ի նուէր մը. Առանայի նահանգին մէջ որբանոցի մը հիմնարկութեան համար Տիգրան Խան Քէլէկեանի կողմէ, ու-րուն՝ հաճոյք մը կը սեպեմ ինձի՝ Մի-ութեան երախտագրտական զգացմ մ-ները կրկնել այս առթիւ։

Այս վեհաձեռն նուէրով, Քէլէկեան իման, Կանոնադրին 5րդ յօդուածին համաձայն, կ'ըլլայ մեր Ընկերու-թեան Բարիբար Անդամը։

Պիտի յիշատակեմ նաեւ կտակ մը՝ 21 ֆէտտան շատ լաւ մշակելի հողի մը Զեկագիւղի մէջ, 3,000) եզ. Ոսկի արժողութեամբ, զոր առատաձեռն մար-դասէր մը՝ Տիգր Գրեգոր Մեթիմէտ-եան ըրաւ Միութեան՝ մասնաւորա-պէս յուզ՝ չ պարագաներու մէջ. իր մահունէն քիչ առաջ, Յիւնալ հողին եկամուտներովը մեր Ընկերութիւնը հանգուցեալին ծննդավայրին Թոքատի մէջ Վարժարան մը պիտի հաստատէ։

Անկարելի է ինձի չի յիշել մասնա-ւորապէս այն գեղեցիկ օրինակը զոր 1908 ին Լեւոն Պէյ Յակոբեան տուաւ Միութեան՝ արամագումարեան տակ զը-նելով 3367 եզրպտ. Ոսկիի կարեւոր գումար մը, օգնութեան հասնելու համար սովէն աղետաւորներուն, որ այդ թուականին մեր Թրքահայ ազգակից-ներուն մէջ կը ճարակէր։ Այս նուէրը մեծապէս ամօքեց մէկէ աւելի թշուա-րութիւններ։

Ճակարկի յիշատակելիք շատ բաներ կան եթէ հարկ ըլլար ինձի մեր ընկե-րութեան վերաբերեալ բոլոր իրողու-թիւնները միմայն թուել պիտի փա-փաքէի մասնաւորապէս իրրեւ երախ-տագրտական արտայայտութիւն, ին-չառակել անուշները մեր այն ազգա-յիններուն, որ անձնութեամբ աշ-խատեցան մեր ձեռնարկին եւ որ նա-խաձեռնութիւնը օտանձնեցին տեղա-կան Մասնաճիւղերի կազմելու Եւրո-պայի, Թուրքիոյ եւ Ինչնէ լսել Ա-մերկայի մէջ. բայց այս բացատրու-թիւնները կրկնութեամբ պիտի ըլլային տարեկան տեղեկագրին զոր քիչ առաջ Ընդհանուր Ժողովին ներկայացուցիւք եւ զոր ապագութիւնը պէտ պիտի ըս-տանաք։ Պիտի զտնէք հոն ձեզ չա-հազրող բոլոր մանրամասն տեղեկու-թիւնները։ Այսօր ուղեցի պարզ ամ-փոփում մը ընդ ձգել այն բաներուն զոր Միութիւնը կրցաւ ընել իր հիմ-նարկութեան ի վեր, որպէսզի կարե-նաք զաղափար մը կազմել այսքան քիչ առիթուն մէջ կարուած ճամբուն վրայ եւ առկէ հետեւեցեք օրինաւոր յիշերը զոր կարելի է սնուցանել Ընկերութեան ապագային համար եթէ ձեռն իւրաքանչիւրը շարունակէ անոր գործուն եւ անխուսէր աշխատացու-թիւնը։

Ի՞նչ օժանդակութիւնը միշտեւ այ-սօր վեհաձեռնօրէն շնորհեցիք մեզի, ա-յնքան մեծներն կը պարտի Միութե-թիւնը իր յաջողութիւնը, եւ ես ու-րի իմ ասիկա հաստատութիւն։ Հե-տեւաբար, խօսքս աւարտեցն առաջ,

իմ անունով ինչպէս եւ կեզր. Վարչ-ութեան ընկերներու՝ եւ մեր Ընդ-հանուր Միութեան հիմնարկներուն անունովը, պարտք կը սեպեմ բոլոր արտաւ շնորհակալ ըլլալ ձեզի։

Սոյն ընթերցումէն յետոյ, որ ծա-փերով ողջուեցաւ ունկնդիրներու կողմէն, բանաստեղծ Հ. Բ. Ը. Միւս-թեան կեզր. Վարչական Ժողովոյ փոխ Առնապետ Վսեմ. Երուանգ պէյ Ազա-թուն նաեւ Տ. Վ. Մալեգեան։

—

Ձ Ե Կ Ո Ւ Ց Ո Ւ Մ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆԻՆ

Կր փոքրամը յայտարարել քե-լստ կանխաճանդի հրաւերի՝ Մա-յիս 8ի կիրակի օրը, ժամը 4իմ (յ. մ), Հայկական Ընդհ. Միութեան տարեկան Ընդհ. Ժողովը տեղի ունեցաւ քաղքիս Ազգ. Վար-ժարանի Ժողովարանին մէջ։ Դիւանը կազմուեցաւ հետեւեալ կերպով՝ Վսեմ. Պողոս փաշա նու-պար, առնկապետ, Տ. Վ. Մալեգ-եան, առնկապետի, Տիգր Գ. Դա-շիբեան եւ Ս. Խերեան քուտա-խոյզ։

Ընդհ. Ժողովը, միաձայնու-թեամբ,

ա) Վաշխաճոյց կեդր. Վարչ-Ժողովին համարատուութիւնը 1 Մայիս 1909—1910 տարեշրջանի, բ) Ընդունեց ինչ ինչ բարեփո-խութիւններ կանոնագրին 2, 4, 15, 18 եւ 19 յօդուածներուն մէջ։

գ) Անճառեց Տ. Ե. Փալապետի հաշուեքննիչ 1910—1911 տարե-շրջանին համար։

դ) Յայտնեց իր շնորհակալու-թիւնը Վսեմ. Պողոս փաշա նուպարի եւ Կեդր. Վարչ. Ժողովի միւս ան-դամներուն, ինչպէս եւ՝ Վսեմ Գա-րիբէյ Էփենտի նորատունկեանի եւ Տօքթ. Պ. Կոստանկիւսի։

Ի Դիւան Հ. Բ. Ը. Միութեան Ընդհանուր Ժողովի

Առնկապետի

Վ. ՄԱԼԵԳԵԱՆ

Դաւիթ, 15 Մայիս 1910

(կնիք)

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ր Ն

Կեդր. Վարչ. Ժողովին համարա-տուութեան կ'երեւայ թէ Միութեան ամբողջ զրամագումարն է. Ղր. 1.494.495.87 (շուրջ 390,000 Քրանք), որուն Ե. Ղ. 1.001.352, 17ը՝ ըստ կանոնագրի՝ անձնութիւնի մասը կը կազմէ։

Միութեան հիմնարկութիւնը ի վեր (1906) զրկուած նպաստներուն համա-գումարն է. Ղ. 1.515.549.4 (շուրջ 400 000 Քրանք)։ Վերջին տարուան մէջ՝ միայն իր յատուկ եկամուտներէն նպաստ զրկ-ծ է Ե. Ղ. 155.603.45, իսկ ընդհանուր ծախք եղած է՝ մէջը ըլլալով մասնաժողովի ունեւ ծախքերը՝ Ե. Ղ. 35.905.50։

Միութիւնը չորս տարուան մէջ ի-տեփական միջոցներով նպաստ զրկ-ծ է. Ե. Ղ. 489.098.84 նուիրատու-թիւններէ գոյացած հասոյթներով Ե. Ղ. 359.818.3 եւ անգամաւորութեան արդիւններով՝ Ե. Ղ. 656.633.70։

Անդամներու թիւը 686 էր բարձր-ացած է 2117՝ մինչեւ 30 Ապրիլ հո-սած անգամացուցականներու համաձայն։ Բացի երեք մասնաճիւղերէն զոր Միութիւնը ունի (Իզմիր, Երեւան,

Մանչեսթըր եւ Գոսթոն, Յէնոք մասնաճիւղներ եւս կազմուած են Գահիրէ, Կ. Պոլիս, Իզմիր, Մերսին, Պրուսա, Սըվաք, Քարս, Էնկերի, Երզնկա, Էրզրում, Տիարպէթի, Հալէպ, Տարսուս, Ֆրիքի, Ռուսուդ, Սոփիա, Նիւ-Եօք, Բրազիլիան, Տրէզնո, Ուսթը, Պրաթըն Նիւ-Պրիթըն, Լոքէն, Ռիչմոնդ, Բաթթէթը-Սէնթրի Յոլս, Լոթ-Քէմպրիճ եւ Պրիմուսթըր։

Կանոնադրին բարեփոխուած յօդուածներուն կարեւորագոյն տրամադրութիւններն են Ձրդ յօդուածին համաձայն Միութեան տարեկան փոխան Մայիսի՝ այսուհետեւ Յունիսի միջոցով սկսած, Կրդ յօդուածով կը ճշգրտուի տարբեր երկիրներու համար մուտքի տուրքի եւ անդամութեան նուազագոյն քանակը (Օսմ. Դ. 2. 10 եւ 5, Տրանք 2,50 եւ 1 25, Երկին 2 եւ 1, Տոլար 1/2 եւ 1/4 եւ Բուլղար 1 եւ 1/2)։ 15րդ յօդուածը կը արժանացնէ որ անուանուի 15 զորքէ առաջադրուած վրձնագրի անգամները միայն կրնան մասնակցել տեղական մասնաժողովներուն եւ բացառիկ պարագաներու մէջ Կեդր. Ժողովը կրնայ տարբեր կարգադրութիւն մը տնօրինել 18րդ յօդուածը կարծազէ տեղական մասնաժողովներուն՝ իրենց տնօրինութեան եւ պատասխանատուութեան տակ կազմելու օժտանալի մասնաճիւղներ եւ մասնաժողովներ անոնց Կեդր. Ժողովին զիջել հետզհետէ գոյացած բոլոր հասոյթները։ Իսկ 19րդ յօդուածին համաձայն տեղական մասնաժողովներու անդամները իրաւամբ կը մասնակցին նաեւ Միութեան Ընդհ. Ժողովին։

Ընդհ. Ժողովին նիստին վերջ տեղի ունեցաւ Գահիրէի մասնաճիւղին կողմէ սարքուած հանգէս-մը՝ Միութեան քառամաս զործուծութեան առթիւ, որուն ներկայ գտնուեցան Միութեան անդամներէն շատեր՝ իրենց ընտանիքներով հանգերձ։ Կեդր. Ժողովի հոգի-մէ բոսնացան Վսեմ, Պօղոս փաշա Նուպարի, Ս. Աղաթոն պէյ եւ Տ. Վ. Մալքեան։ Հանգիստականներէն խօսք առին՝ Գեոր. Մալքե Սպիկ, Սերոբեան եւ Տ. Մ. Տամատեան։

Կ Ա Թ Ի Լ Մ Ը

ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԹՅՈՒ ՄՈՎԷՆ

(Շար. Գաի. քիւնի եւ վերջ)

Վերջին վերածնունդի մէջ ժիւղ-ժիւղ դարերուն, եթէ ոչ բոլորովին արաբականութիւն՝ գոնէ արաբական զօրեղ ազդեցութիւն տեսնել կ'ուզեն ոմանք։ Սակայն իմ կողմանէ դժուար է համաձայնել այդ կարծիքին։ Էդ դարերն ի վեր Հայաստանը ողողող արաբ ժողովուրդը ինչու պիտի սպասէր մինչ ժիւղ-ժիւղ դարերը իր արուեստով Հայաստանի վրայ ներգործելու համար։

Նոր գիտութիւնը, մեթոդը արաբներու ստեղծական տաղանդը Արաբներ չեն որ արուեստ ստեղծողներն իրենց գրաւած երկիրներուն մէջ, այլ իրենց գրաւած իւրաքանչիւր երկիրներու բնիկ ժողովուրդները ստեղծեցին տիրող տարրին համար, եւ այդ պատճառով ալ Սպանիա, Թուրքի, Ալճերիա, Սիւրիա, Պարսկաստան եւ Հայաստան իւրաքանչիւրը բո-

տեղական պայմաններու եւ սեփական ճաշակի, իրարմէ մեծագէտ զանազանող արաբական ոճեր ստեղծեցին։

Հայաստանի մէջ ժիւղ-ժիւղ դարերու ծաղկող արաբական ոճը եթէ բաղդաւանք Հայոց հնագոյն ոճերու հետ, շատ կը գրտնենք նոր արաբականի կորիզներ որոնք հայ գերիներու հետ թափաւելով երկրէ երկիր արաբական տիրապետութեան սահմաններուն մէջ եւ հետզհետէ զարգանալով յետադարձ ներգործութիւն միայն ունեցեր են։

Գոնեայի մէջ Ախլաթցի մի դաւանաւորն հայ ժառանգարուն կը չինէր Ալայետտինի Մզկիթին ամպիոնը, որուն վրայ Հայաստանէն տարուած գեղեցիկ մանուածոյներով զարդարելէն յետոյ վրան ալ կը դնէր հայկական ութանկիւնի թմբուկաւոր կաթողիկէ նոյնպէս կաթողիկէի ձեւով շինուած է նաեւ Մզկիթին գմբէթը։

Երբ հայ արուեստագէտին ճակատագիրը տնօրինող եւ անոր հայրենիքը որոշողը բռնակալ տիրապետողին քմահաճոյքն էր, այլեւ ինչու զարմանալ որ Եդ դարու Տեկուրի պայտաձե կամարները ժող տարուն Սպանիայի մէջ կ'երեւնան։

Հայկական պատմական շրջանի իւրաքանչիւր դար գեղարուեստական պատկանելի մեծագործութիւններ արտադրէ, որոնցմէ շատերը կանգուն կամ կիսականգուն մեղ հասած պերճախօս վրկայներ են հայ ժողովուրդի գեղարուեստական բեղմնաւոր տաղանդին, որոնց մէկ քանի նմոյշը ներկայացնել հաճոյք է ինձ համար։

Բագրատունիներու օրով Շիրակի մէջ, հազիւ մէկ ու կէս միլիոնի հասնող մի փոքրիկ ժողովուրդ, բաւական չէր որ արեւելեան արտակարգ ճոխութեամբ արքայական պալատներ պիտի կանգնէր, թագաւորներու թագերը թանկագին գոհարներով ու մարգարիտներով պիտի զարդարէր, թագուհիներու համար ոսկեթել ընէզներ ու ծիրանի ներ պիտի պատրաստէր, բազմաթիւ թագաւորազուններու եւ իշխանազուններու վայելից ու զուարճութեանց համար առատ հարկեր ու նուէրներ պիտի վճարէր, այս ամենէն զատ, այդ փոքրիկ ժողովուրդին քրտանց կաթիլներէն գոյացեր է այն բազմամիլիոն գումարները որոնցմով կանգնուեր են բացի Անիի հաւաք պարիսպներէն ուրիշ բազմաթիւ բերդեր հազարաւոր հաւաքածոյներ հազարաւոր հասարակաց ճանապարհներ գեղարուեստական վերին աստիճան նուրբ եւ շնորհալի տեսքով, եւ ո՞րչափ ժամանակի մէջ, առաջադիւական է եթէ ըսնմ հարուր քսան տարուան

փոքր ժամանակամիջոցի մը մէջ, Յիրաւի Անիի շինութիւնը թէեւ տեւեց ժող դարը, բայց երբ դուրս հանենք պարսկական բռնակալութեան շրջանը յորում գեղարուեստական զարգացման ոչ մի շարժում չլինելէն զատ նոյն իսկ Անեցու ամենէն սիրելի թագուհի կաթողիկէին գագաթը մահմետական մահիկին փայլիւր անմիաթար սուգի էր մատնած ժողովուրդը, այլեւ հազիւ մէկ ու կէս դար կը մնայ իբրեւ շինարարական շրջան։

Ով որ տեսած է Բիւզանդիոնի պարիսպները եւ բաղդաւանք Անիի պարիսպներուն հետ, նա կը տեսնէ թէ դժբաղդ Անիի գեղապարոյր բուրգերը ո՞րչափ թանձր ստուեր կը ձգեն Բիւզանդիոնի պարիսպներու կոշտ հաստերու թեւան վրայ։

Դագիկ Ա. երբ է. դարուն մէջ կանգնուած հաշակաւոր Ջուարթնոց եկեղեցիի տխուր յիշատակը կը վերականգնէր Անիի մէջ իւր մեծագործ Ս. Գրիգորով, անոր բարեպաշտ թագուհին Սմատի հիմնարկած կաթողիկէն չքեղապէս կամբողջացնէր, եթէ կաթողիկէի ներքին ճիւղանկալի եւ ոսկեքել զարդարանքներուն մասին Ասողիկի վկայութիւնը հաստատող փաստերէն մերկացած է տաճարը, անոր արտաքին պատերուն վրայ գտնուած քանդակազարդերէն մէկը, արեւելեան խորշերու մէկ հատին կամարը թող պատմէ թագուհիին ճաշակը։

Անիի մէջ ամենահասարակ տրեւերու դրանց եւ օճախներու վրայ վերագործուած զմայլելի քանդակազործութիւններ ցոյց կուտան որ, այն տեղ իշխաններու եւ ազնուականներու միայն յատուկ չէր տեսնուէր գէպի գեղարուեստը, ամեն դասակարգի ժողովուրդ վարակուած էր անոր սիրով։

Դագիկաչէն Ս. Դրիգորի եռալարի տաճարի ամպածար կաթողիկէն երբ հսկայ պարիսպներէն եռապատիկ աւելի բարձրացաւ, դուրսը դուռտն մէջ իր ոչ խարները արածող հովիւին սիրտը ուրախութեամբ լեցուեցաւ, ու միկ հոգւոյն բոլոր պարզութեամբ դարձաւ իւր կնոջ եւ հրամայեց գնալ եւ ազօթել նորակառոյց արքայական փառքի տաճարին մէջ, կեանք եւ ողորմութիւն խնդրելու երկնաւորէն առաքինի լե մեծագործ թագաւորին համար որ պարծանք մը եւս աւելցուց հայգեղարուեստի պատմութեան, բայց սակայն երկար չտեւեց այդ ուրախութիւնը, օր մը երբ իր բարեպաշտ կինը այդ արքայական փառքաւոր տաճարին մէջ ազօթելու անարժան համարելով դուրս չը պատեցին վրէժխնդրութեամբ լեցուած աչքերը գարձուց գէպի արքայական բարձրաբերդ պա-

լատները եւ առիւծի մունչիւնի նըման գոռաց, Վերջայ հօր, ես խեղճ հովիւս, պիտի խորտակեմ քու ամբարտաւանութիւնդ, դու հարստութիւնով, մեծութիւնով ու զօրութիւնով կը հպարտանաս, ես չ'աշխարհիկ ճաշակովս պիտի խորհեցնեմ քու գոռող գլուխը, ես ալ պիտի կանգնեմ մի տաճար քու դիմաց, թէեւ փոքրիկ, բայց բոլոր փառքովդ պիտի նախանձիս անոր վրայ, մարդիկ քու կանգնած վիթխարի զանգուածին առջեւ պիտի ափշին ու սոսկան, իսկ իմ տաճարիս առջեւ հոգեկան քաղցր զմայլումով պիտի համակուին քու կրօնիկ խորխոր գլուխը շուտով պիտի խոնարհի եւ սիրտդ ու հոգիդ պիտի թաղէ իր փլատակներու տակ, սակայն իմ չ'աշխարհիկ հաճարիս համետ կոթողը մշտապէս աստղի մը պէս դարուց ի դարս պիտի փայլի գեղարուեստական աշխարհի հորիզոնին վրայ։

Հովիւը հառած էր իւր նպատակին, շուտով կանգնեց Ս. Գրիգորի նման եռալարի մի մատուռ, արտաքուստ շուրջանակի զարդարուած որմասիւններով գմբէթարդ կամարներով ու խորշերով, իսկ ի ներքուստ օժտեց մի այնպիսի աննման առաւելութեամբ որն որ համաշխարհային ճարտարապետութեան մէջ իր նախորդը չ'ունենալէն զատ, իր յետնորդը հազիւ տեսնուեցաւ ժող. եւ ժող դարերու գոթական արուեստին մէջ, այն ալ փայտի եւ երկաթի աշակցութեանց շնորհիւ։

Յատակագիծը սիրուն աստղ կը ներկայացնէ, Առաջին յարկը ծածկուած է որմասիւններէն գէպի կեդրոն ձգուող վեց ամբողջ կիսաբոլորակ կամարներու միացումով որոնք մէկմէկ խտացուցած են կեդրոնին վրայ, եւ միացման միջին կէտին վրայ սահմանուած էր ջահ կամ կանթեղ մը կախելու թերեւս արքայական տաճարէն անարգանք դուրս վաճառող հովիւի եւ հովուհիւի գերեզմանին վրայ մշտնջենական լոյս սփռելու համար։

Արդեօք ո՞րչափ մարդիկ զարմանքով դիտեցին այս կամարները երբ տակաւին չէն էր, եւ չէին վար թափեր անոր քարերը, հանճարեղ ճարտարապետը քարերուն տաշուածքի ձեւին գաղտնիքը ծածկեր էր կամարներուն մէջ եւ արտաքուստ ցոյց տուեր էր սովորականի կեղծ ձեւը։

Այսօր, մենք ալ պիտի զարմանայինք եթէ փլուածքով անոր գաղտնիքը երեւան չգար, այնպիսի ձեւով տաշուածքներ ունին քարերը որ չորս անգամ աւելի մեծ նոյնանման շինութեան մը համար կատարեալ ապահովութիւն կ'ընծայեն, եւս կը յուսամ որ ի մօտոյ բաղդ կ'ունենան հրապարակ հանելու այս գործանալի կազմութեան մանրամասն տեքստները։

(Գեղունի) ի ԹՕՐԱՄԱՆԵԱՆ

յերու այրիններուն և որբերուն տակաւին նպաստ չի տրուիր եղեր կառավարութեան որոշումին հա- կառակ. ընդհակառակը ջարդը կազմակերպող և պատերազմ ատ- եանէն դատապարտուող թուրք երևելիները առանց բանտ պառ- կելու ներման արժանացան:

— Դաշնակցական պետերէն Նշի- չէ թօմեանը սպաննող Յարէթը ապրիլ 26ին կարնոյ մէջ կախա- ղան բարձրացաւ: Կախաղանին տակ Յարէթ պաղարկեալ թեամբ մը յայտարարեց թէ այս մա- հու պատիժը կ'ընդունի իբր քաւ- ութիւն այն սփռներուն համար, որոնք գործուեցան անմեղ մար- դոց վրայ: Բայց ինք կատարեալ- պէս արդարացի կը նկատէ թօ- ճեանի սպանութիւնը:

Ճատերու հետաքրքրութիւնը գո- հացնելու և նոր անդամներու ալ գրգիռ մը լլալու մտածումով տորն կը ներկայացնենք հայկ- Ընդհ. Միութեան առաւելագոյն Մուտքի տուրք վճարող անդամ- ներու ցուցակը:

Ըստ Կանոնադրի, գէթ հազար ոսկի վճարողը Բարեբար անդամ եւ չորս հարիւր ոսկի վճարողը Պատուոյ անդամ կը նկատուի:

— Ե. Դ. 10) հաւասար է 26 ֆր. Բ - Պողոս փաշա Նուպար Բար. Անգ. 100000	100000
Էրբանս փաշա Բարթաղ » 100000	100000
Տիգրան Խան Քէլէկեան » 97312	97312
Նազուկ փաշա Արթին Պա. Անգ. 40000	40000
Տիգրան Պողոս Նուպար » 50000	50000
Տիգրան Ե. Եսմի Գափաճեան » 40000	40000
Լեւոն Պի Յակոբեան » 77100	77100
Մաթոսեան Նազար » 30000	30000
Գրգիւր Նշիարեան » 20000	20000
Գէորգ Սարգիսեան » 20000	20000
Արթին Պէյ Բէյ Կեան » 15000	15000
Միքայէլ Պէյ Բէյ Կեան » 15000	15000
Արսենակ Կամսարական » 12675	12675
Տիգրան Կամսարական » 11700	11700
Կարապետ Պէյ Եւթեան » 10900	10900
Վահան Պորսաճեան » 10000	10000
Տիգրան Ե. Աշոտ Տեալ Նուպար » 10000	10000
Զարեհ Կէյ Նուպար » 10000	10000
Վահան Պէյ Նուպար » 10000	10000
Մկրտիչ Անդրանիկեան » 10000	10000
Տիգրան Երանոսեան Յակոբեան » 9750	9750
Մաթեոս Պէյ Եսմի » 9690	9690
Երուսէղ Պէյ Ալիթեան » 5000	5000
Յակոբ Պէյ Բարթաղ » 5000	5000
Յովսէփ Փեմպեան » 5000	5000
Պաքըճեան Նազար » 4375	4375
Սիմոնի Էփեան » 4820	4820
Կարապետ Էփեան » 4820	4820

(կնիք)

ՏՐԴԴԱԹ

Պուկարեանը վէ Բուժանիանը պիտ գաչ չէհրիւրիսէն եօճըլըգ իթմէք սէպէպի իլէ՝ Վերաւունքս իքի հաթթա գատար չըգմայա- ճագ տըր: Պաղաթ պու միւնա- սիպէթլէ հէօրմէթլի ապօնէլէր- միզէ ֆաթթիլի պիտ մուգապէլէ իթմիշ օլմագ իչիւն՝ պու վագան. ցա էսնաւընտա Պուկարարըն թէվարիսիսի թագ իտուպ, ալ- տէթիմիզտէն սօնրա՝ վագիթէ- լինաա ապօնէլէրիմիզէ մէճնանէն:

կէօնտէրէճէլիպ, Շուճու տախի ի- լալէ իտէլիմքի՝ մէգըլիւր քէսալէ վէ պուճաւան սօնրա նէշը օլընա- ճագ Վերաւունքս՝ նօմէրօլարը եէնի եաղըրալէ պասըլաճագ տըր:

Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ

ԹԻԻՐԻՔԻԱ

Ամերիկատան միլիթտաչա- րմըզ թարաֆընտան Անատու- վիլայէթլէրինէ կէօնտէրիմիշ օ- լան բարա չէքլէրի թիւրք բօս- թախանէլէրինտէ չալընմըշ օլ- տըղը թէպէլիւն իթմիշ օլմաղլէ, Պատրիարքարան թարաֆընտան բօսթախանէլէ գարըն տալայա գըն. մ օլընաճագ տըր: Էն զի յատէ լմէսիւթ իտիլէճէք նօգ- թա չուրասը տըր քի՝ պու խըր- սըղըզլար չու եէնի ըէթիմտէ վուգու պուլմուշ տըր: Էնէպի բօսթախանէլէրի գալտըրմագ իտ- տաւսընտա պուլմուշան չու թէօն - թիւրք հիւքիւմէթի տահա էվ- վէլ քէնտի խըրսըզ վէ միւրթէ- քիպ մէմուրլարը մէյտանտան գալտըրսա տահա միւնապի օ- լաճագ տըր:

— ԿԻՐԻՏ մէսէլէսինին հալլի թէքրար համի տէվլէթլէր տէ- րիւհտէ իթմիշ օլուպ, պու պապ- տա Պրանսա պիւր բրօկրամ թէր- թիպ իթմիշ վէ ինկիլիզ վէ ի- թալիա տէվլէթլէրին ըէյիսի թահսիլ իթմիշ օլարագ, պու կիւն- լէրտէ Բուսիանըն տախի ըէյիսի ալապիլէճէկի եաղըլիօր: Մէգ- քիւր բրօկրամ մուճէպիսնէ՝ կի- րիտէ Շարդ-Բուճէլի կիպի մուլ- թարիյէթի թամմէ վէրիլէճէք, Եուճան ասըլդատէլէրինտէն պիւր գաթ սէրգօմիսէր նապ օլընա- ճագ Պապը Ալիսին թաստիպի ի- լէ՝ պու զաթ ատանըն մէճիսի միլիսի իլէ միւթթէֆիպէն հէր նէվ թէշըլիւթ վէ թանզիլմաթը թէրթիպ վէ լըրայա մէզուլ պու լուճաճագ տըր: Պագաթ եէլին մէսէլէսինին նէ կէօնա օլաճագը չիմտիլիկ մէճնուլ տըր: Իսլամ մէզուլարըն վէ միւթթիլէրին Եուճան գըրալը նամընա եէլին իթմէլէ մէճպուր օլմամալարը ի- չիւն՝ Պապը Ալի թէքրար համի տէվլէթլէրէ նօթա վէրմիշ տիւր:

— ԱԼՊԱՆԻԱ Արնաւուտըղըն իլիթիւլը պատըրըլմըշ ատտ օլընապիլիւր: Տիքաթօտան վէ Տրիսիյատան մաաա տիկէր գա- զալարտա Արնաւուտարը քէքրի- յէթլէ վէօլլէրինէ չէքլիմիշ տիւր- լէր: Հիւքիւմէթ պիլթիւն խա- նէլէրի եօղալուպ, սիւրալարը զապթ իթմէքտէ տիւր վէ նիւ- ֆուս տէֆթէրինէ պագուպ, է- վինտէ պուլընմայանլարա ասը նազարը իլէ պագարագ, անլարը տիլմանը հարպտ վէրիօր: 3,000 տէն զիյատէ թուֆէկ զապթ օ-

լուճուլ տըր վէ միւթթիւն օլտը- ղը գատար Արնաւուտարը սի- լահսըզ պրագմագ իչիւն ասքէր հիչ պիւր ճէպր ու թէճալիլը- տէն կէրի առւրմայօր: Էլան Անատուտան Սէլանիլ թա- րիգի իլէ Ալպանիայա եէնի աս- քէր սէվզ օլընիօր: Ասքէրլէրէ էմիր վէրիւմիշ տիւր Ալպանիատա- քի պիլթիւն գալէլէրի, իսթիհ- քեամլարը թօրա թուլթուպ տա ղըլթմագ իչիւն: Ճանընը վէրիւր սիւրալընը վէրմէք՝ Արնաւուտար սիւրալարընը գուգու կիպի վէրի- յօրլար: Գիւրտլէր տախի այնը սուրէթտէ վէ տահա գօլայ սի- լահսըրընը վէրէճէքլէր իսէտէ հիւքիւմէթ սըտգը տիլտէն Գիւրտ- լէրի մէտէնիլէթլէ վէ նիզամա սօգմագ իսթէմէյօր: Պագաթ մէ- մուլ իտէրիլէր Շէվլէթ բաչա Ալ- պանիատան ալտէթիւնտէ Գիւրտ լէրին տախի սիւրալարընը թօ- լամագ իչիւն թէրթիպ իթմէկէ պաշալմըշ օլտըղը Լաքիսէյի Մէճ- լիսի Մէպուսանըն թաստիգիսէ իհալէ իտէճէք տիւր:

— Վէլիհաճ Եուսուֆ Իպէթթիւն Էֆի, միւթթէվէֆա գըրալ Էտուարտ- ըն ճէնաղէ ալայընա հաղըր պու- լուճագ իչիւն Լօնտայա կիթմիշ օլմաղլէ, ալտէթիւնտէ Բարիլտէ Պրանսա վիւքէլաւընտան հիւնիւ գապուլ պուլմուշ վէ ճուճու- ըրիլէթ ըէյիսի Մ. Պալիլէր անա իքրամէն զիյաթէթ քէշիտէ իթ- միշ տիւր: Եուսուֆ Իպէթթիւն Էֆի Պէլիլատա տախի ուղըրուպ, գը- ըալ Բէթարտան ֆէվզէլատէ թալթիթթիւթա մազհար օլաճագ տըր:

— Թուճատան Ատրիաթիգ տէ- նիլիսէ գատար շըմէնտըֆէր ին- չասը իչիւն Սերպիա վէ: Թուրք- իա պէյիսիտէ իթիլաֆ հասըլ օլ- մուշ տըր: պու շըմէնտըֆէր թու- նա քէնարընտաքի Բրօնօլօ սըրպ գասապաւընտան պաշալանաճագ, եանի Բուճանիայա էն եաղըն պիւր նօթթատան վէ օրատա միւքէմմէլ պիւր շըգըրմ տախի ինչա օլու- ճագ տըր:

ԱԼՄԱՆԻԱ

Ալմանիա տէվլէթի չու սըրա Աճմիստանտա վէ Մըսըրտա էն- վաի թէտպիլլէրլէ ինկիլիզլէրին թէէսիլլինէ գարըն մալիլէճէ, ըգապէթ իթմէկէ չալըշիօր: Ալման կազէթալարը Մըսըրը վէ Աճմիստանըալման չարըրալընա թահլիլ իթմէք իչիւն ուղըն պէնտլէր եաղմագտա վէ քէնտի սէրմայէտարալարընը օ՝ էյալէթ լէլտէ շիւպէլէր ալմագ իչիւն թէշլիլ իթմէքտէ տիւրլէր:

ԲԱԶՄԱՎԷՊ

— Ազգային, Բանասիրական, Գրական Պատմական, Կենսագրական ամսաթերթ Բաթնիգին տարեկան 10 ֆր. Հասցէ՝ Խմբ. «Բազմալիպ»ի Ա. Ղազար (Խաւրա) Վեննիսի

Ն Ո Ւ Ա Գ Ի Դ Ա Ս

Օտեսայի Ռուս կայսերական երաժշտական վարժարանի շըր- ջանաւարտներէն Տ. Չօլաքով կը ծանուցանէ թէ երաժշտութեան դաս պիտի տայ թէ՛ թէօքիայով և թէ՛ ո՛ւրէ նուագի վրայ:

Իր պայմանները խիստ նպաս- տաւոր են, չաքաթը երկու ան- գամ դասախօսելու փոխարէն ամ- սական միայն փր:

Փափաքողը թող գիմեն Վերա- ունքի խմբագրատունը և ար- ձանագրուին:

«ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ»

Ժէօն-Թիւրք կառավարութեան քը- մահաճ մէկ նոր որոշումով Թուրքիոյ մէջ վաճառուող արգիլուեցաւ այս գե- ղեցիկ երկասիրութեան ու ողբացիալ Արփիարի դուլիս գործոցն է և կարծէ որ ամէն հայու տուն անկէ հատ մը ու- նենայ:

Արտասահմանի մէջ Կարմիր ժամուցի միակ կեդրոնատեղին է «Իրաւունք»- ի խմբագրատունը: Կը գտնուի նաեւ հե- տեաւ սեղերը:

ԳՍՀԻԷՏ՝ Արայ Գալէմիսեան

Ոսկերիչ Ի Սահ-Սալիլ

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՒՄ՝ Տ. Եւրոպիկոն Արտա-

համահուն, Մէյտան փաղոց

ՊՈՒԳԻԷՆ՝ Տ. Ղ. Կոնիկեան

Ազգ. վարժարան

ԳՕՆՍՍԱՆՅԱ՝ Տ. Սրտակ Սէլիքեան

ՍՕՍԻՍ՝ Օր. Զ. Թաշեան Ազգ.

վարժարան

ԲՈՒՍՉՈՒՔ՝ Տ. Համբարձ Գրիգորեան

Գիւն Կ. ֆր.

Ամերիկայի և Կովկասի մէջ վաճա-

ռող չէ որոշուած տակաւին:

Վաճառելու համար շատ ուղղուն-

րուն մասնաւոր զեղչ, իսկ վճարումը

կանխիկ:

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ԶԱՆԻԻԷ		
ՊՈՒՂՏԵՍ		
Վահան 100 քիւ.	15. 10-15. 80	
Արապա 15-80 լիպ.	13. 40	
Այլ թ.		
Վահան 100 քիւ.	10. /10. 50	
Արապա 45-52 լիպ.	6. 65	
ԵՈՒԼԱՅ 100 քիւ.	11. /11. 30	
ԶԱՎՏԱՐ 100	12. 50	
Արապա	10. 55	
ՖԱՅՈՒԼԻԱ 100 քիւ.	22.	
ՏԱՐԸ 100 քիւ.	16/17	
ԲՕԼՕՁ արապա 55-60 լիպ.	6. 09	
ՄԻՍԻՐ 100 քիւ.	11. 80	
արապա 75 քիւ.	8. 70	

ԳԱԳԱԼԻՑԷ

Վառնա բնացաւընտա պագալիլէ	
մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, ալթու	
ֆրանք իլէ:	
Գիւլէլի	2. 15/2. 8.
Շէֆէր նէմգէ քէլլէ	1.
Շէֆէր քէմմէլ անտըգ	—51
Բիւրնձ ճէնօվա չուվալը	47
» Ինկիլիզ »	81
» Բիւզոն »	58.
» Ֆիլիպէ »	47. 60
ԿԱՁ Պաթում Սանտըղը	10.
» Թրայան »	9. 70
ՁէՅԹԻՆ եաղը քիւ.	1.50—1.70
ԳՈՒՐՈՒ Իւզլիւ	60. 70
Ե. մ. մ. րիւ	4. 70